ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

17 փետրվար, 2022 թվականի № 12-Լ

«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 84-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և 92-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 30-ի N 63-Լ որոշման 2-րդ կետը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից հայտարարված «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու վերաբերյալ մրցույթի արդյունքները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձ հաստատել Հանրային հեռարձակողի կողմից ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված «Բեյքեր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Ընկերության 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտ իրականացնելու ծառայությունների դիմաց «Բեյքեր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը վճարման ենթակա գումարի չափը սահմանել 945,000.0 (ինը հարյուր քառասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը):

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

17 փետրվար, 2022 թվականի

ք. Երևան